ԽՈՍՔԻ ԻՆՔՆԱՏԻՊ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ա. Ս.

Հայ լեզվաբանական գիտության մեջ լեզվաբան, լեզվափիլիսոփա, գրականագետ Միշել Փոլադյանի աշխատություններով նշանավորվում են խոսքի վերագնահատումը և վերադարձը լեզվաբանության ոլորտ[1]: Թվում է, թե այս ոլորտում վաղուց պետք է տեղ հատկացվեր խոսքի ուսումնասիրությանը, սակայն մինչև 1990-ականների վերջը կատարված հետազոտությունների հիմնական առարկան, որոշ բացառություններով, մնում էր լեզուն՝ որպես մի «վերացություն»:

Միշել Փոլադյանի գիտական աշխարհայացքը կարելի է սահմանել իր իսկ հերոսի արտահայտությամբ. «Անկախությունը սկսվում է խոսքից...»[2]: Այս միտքն է ընկած աշխարհի կոնցեպտուալիզացիայի փոլադյանական տեսության հիմքում: «Չպետք է մոռանալ,- նշում է գիտնականը,- որ ամեն մի հաղթանակ լեզվի հանդեպ նմանապես հաղթանակ է աշխարհի հանդեպ»[3], որովհետև որքան էլ լեզուն գիտակցական աշխատանք լինի, այն ինչ-որ կերպ կապված է աշխարհի հետ[4]: Աշխարհի հանդեպ յուրովի հաղթանակելու փորձը Փոլադյան փիլիսոփան սկսում է՝ լեզվին մարտահրավեր նետելով: Համարձակ նախաձեռնություն: Գիտակից լեզվաբանը (իսկ *գիտակցությունը հենց այնպես չի գալիս*, այն հիմնված է դիտողունակության և խոսքի՝ որպես դիտողունակության հաստատման վրա) պետք է պատրաստակամ լինի թափանցելու խոսքի ներքին շերտերը: Այն լեզվաբանը, որը բավարարվում է լեզվական երևույթների մասին մակերեսային սահմանումներով կամ արձանագրումներով, իր հետազոտությունը ի սկզբանե դատապարտում է անհաջողության:

«Ամեն մի լեզու ունի իր առանձնահատկությունները. զանազան տարբերություններն ի հայտ են գալիս, երբ ուշադրությունը կենտրոնանում է հատկապես երևույթների ոչ թե ծագման, այլ հաստատման (վերջին փուլի) վրա: Այս պատճառով է, որ շատ դեպքերում քերականագետ տիպաբանը հետզհետե սահմանափակվում է նմանությունների և տարբերությունների արձանագրմամբ, առանց տալու որևէ բացատրություն խորքային կառույցի մասին: Սակայն ինչպես արդեն Հումբոլդտն էր ասում, լեզուների տարբերությունը միմիայն հնչյունների և նշաննե-

---

[1] Այս առումով պատահական չէ, որ Մ. Փոլադյանի՝ հայրենիքում տպագրված առաջին աշխատություններից մեկը կրում է «Խոսքի վերադարձը» վերնագիրը, Ե., 1999:

[2] **Փոլադյան Մ.,** Մաշտոց և Խորենացի, Ե., 2001:

[3] **Փոլադյան Մ.,** Պատում և ժամանակային ռեֆերենցացիա Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ (Մաշտոց և Խորենացի, էջ 38):

[4] Տե՛ս **Փոլադյան Մ.,** Հայերենի հոլովները և մտքի կինետիկան, Ե., 2002, էջ 142:

րի տարբերություն չէ. այն նաև աշխարհզգացողության տարբերություն է»[5]: Շեղումներն ու տարբերությունները լեզուներում պատկանում են մտային հնարավորությունների ոլորտին[6], ուստի լեզվաբանի, առավելապես լեզվափիլիսոփայի առաքելությունը սկսվում է նախ այս ոլորտից: Միշել Փոլադյանը, հետևելով Գյուստավ Գիյոմին, խիզախում է մտնել այդ ոլորտը:

Խոսքը փոլադյանական ընկալմամբ աշխարհն արտացոլող մտքի առարկայացումն է՝ աշխարհի կոնցեպտուալիզացիան: Անհրաժեշտաբար կարևորվում է խոսքի ճանաչողական գործոնը, որի միջոցով Մ. Փոլադյանը ամբողջացնում է իր լեզվաբանական վերլուծությունները: Եթե խոսքը աշխարհընկալման և ճանաչողության գործընթացի արդյունքն է, ապա դրա ուսումնասիրությունը ենթադրում է տարածաժամանակային գործոնների հաշվառում, խոսող սուբյեկտի դիրքը, ուստի և՝ տեսանկյունը այդ գործոնների հարաբերությամբ[7]: Հետևողականորեն ուսումնասիրելով այս բոլորը՝ Մ. Փոլադյանը կառուցում է դինամիկ լեզվաբանություն, ինչը բնականորեն արտացոլում է խոսքի դինամիկ բնույթը: Խոսքաստեղծ մտքի կինետիկան այստեղ օժտված է գծային էներգետիկայով: Այս լեզվաբանությունը միտված է դեպի խոսքի ամբողջական և խորքային ուսումնասիրությունը:

Այսպես, հոլովներին նվիրված իր կարևորագույն աշխատությունում Մ. Փոլադյանը նշում է, որ դրանք ոչ թե իմաստներ են ներկայացնում, այլ հրահանգներ՝ իմաստը խոսող անձի և այդ հրահանգների համագործակցության արդյունքն է, երբ վերջինները մտնում են խոսք. «Եվ քանի որ ամեն մի կոնցեպտուալիզացիա ենթադրում է կարգ և ուղղվածություն (աննպատակ խոսք չկա), իրագործվելով, այս հրահանգներն առաջացնում են հատույթներ (շա-րույթներ): Շարահյուսական կառույցը կանոնավորում է և բևեռում հրահանգները, ստիպում կինետիկ էներգիային գնալ մեկ ուղղությամբ»[8]: Այդ էներգիան խոսքի կազմակերպիչ ուժն է: Չսահմանափակվելով դիտարկել հոլովը որպես գոյականի քերականական կարգ՝ Մ. Փոլադյանը հոլովական տարբեր դրսևորումները բացատրում է ըստ կինետիկ էներգիայի ուղղվածության, որը կառավարվում է նախադասության իշխող հանգույցի (ըստ Տենիերի)՝ բայի հարաբերությամբ, ինչի շնորհիվ էլ սահմանվում են ենթակայի, խնդրի և պարագաների կարգավիճակները: «Նախադասության կինետիկան,- նշում է լեզվաբանը,- երկուղղված կինետիկա է բազմաթիվ լեզուներում. ա) ձախ կողմում նշելու համար ագենսենթական, բ) աջ կողմում նշելու համար լրացումները (սեմանտիկ մակարդակում պացիենսը և հասցեատերը): Սա նշանակում է, որ կինետիկան երկու դրսևորում ունի. ա) արտաքին կինետիկան, այսինքն՝ բայի արտաքին դինամիկան. այն վերաբերում է ստատիկ, ատրիբուտիվ և անանցողական բայերին: Սույն կինետիկան մնում է ենթակայի բևեռի սահմաններում, բ) ներքին կինետիկան, այսինքն՝ բայի ներքին դինամիկան. այն վերաբերում է անցողական,

[5] Տե՛ս **Փոլադյան Մ.,** Միտքը և շարահյուսությունը (Ժամանակ, տարածք, անձ, Ե., 2003, էջ 32):

[6] Նույն տեղում, էջ 33:

[7] Նույն տեղում, տե՛ս նաև **Փոլադյան Մ.,** Հայերենի հոլովները և մտքի կինետիկան:

[8] Նույն տեղում, էջ 14:

պատճառական և շարժման արդյունքային բայերին»[9]: Կինետիկական այս դրսևորումների հետևանքով հոլովական հրահանգները դառնում են վեց հարաբերությունների արտահայտիչ. դրանք են հանումը, դիրքավորումը, ուղեկցումը, մոտեցումը, ներառում Ա-ն և ներառում Բ-ն:

Համալիր վերլուծության կողմնակից լինելով՝ Մ. Փոլադյանը հոլովների էությունը բացահայտելու համար զուգահեռաբար բացահայտում է բայի՝ որպես գործընթաց արտահայտող խոսքի մասի ճանաչողական առանձնահատկություն-ները: Խնդիրը կրկին կապված է դիտողունակության հետ. «Օբյեկտի պերիմետրից ելնելով, աչքը հաստատում է կադրը, և եթե իրադարձի հետ գործ ունենք, ինքնաբերաբար ընտրում է կա՛մ *սկիզբը* (ընդգծումը՝ Մ. Փոլադյանի), կա՛մ *միջանկյալ տարածքը,* կա՛մ էլ *վերջը*: *Աչք* հասկացությունը պետք է վերցնել նմանապես փոխաբերական առումով՝ առարկաների վերացական կոնցեպտուալիզացիայի դեպքում»[10]: Ըստ այդմ էլ առանձնանում են գործընթացի տեսակները՝ գործունեություն, կատարողություն և ավարտվածություն: «Հոլովային համակարգը,- նշում է Մ. Փոլադյանը,- պայմանավորված է այս երեք տեսակի պրոցեսներով. ավարտվածությունը, օրինակ, պահանջում է խընդիր (անանցո-ղական բայերի դեպքում Ագենսն ինքն է անող և լինող անձը) [...]: Խնդիրների կարգավիճակն ուղղակիորեն և պարագաներինը՝ անուղղակիորեն կախված է պրոցեսից»[11]: «Այսպիսով,- եզրակացնում է գիտնականը,- զանազան հոլովային ձևույթների բաշխումը տեղի է ունենում ոչ միայն ֆորմալ շարահյուսական պլանում, այլև՝ կոգնիտիվ կառուցվածքային մակարդակում»[12]:

Միշել Փոլադյանը համեմատաբար կարճ ժամանակահատվածում թողեց զգալի գիտական ավանդ, նրա աշխատությունները հայրենիքում լույս են տեսել 1998-2003 թթ.: Տիրապետելով հսկայական գիտական նյութի, քաջածանոթ լինելով արևմտյան լեզվաբանական արդի ուղղություններին և չափազանց ուշադիր ուսումնասիրելով հայ հին և արդի աշխատությունները՝ Մ. Փոլադյանը փորձեց արդիականացնել և մտքի նորարարություն բերել հայրենի գիտությանը:

Սույն հոդվածով ես ցանկանում էի իմ հարգանքի տուրքը մատուցել տաղանդաշատ գիտնականի, ուսուցչիս և ավագ ընկերոջս հիշատակին և միգուցե տալ նրա առաջադրած գիտական մտքի բանալին:

Հաջորդիվ ներկայացնում ենք Մ. Փոլադյանի վերջին անտիպ ձեռագրերից մեկը, որը, որպես առաջաբան, նախատեսված էր բային նվիրված մի առանձին հետազոտության համար:

---

[9] Նույն տեղում, էջ 20-21:
[10] Նույն տեղում, էջ 105:
[11] Նույն տեղում, էջ 103:
[12] Նույն տեղում, էջ 55: